



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԼՈՒՄՆԻ ՄԱՍԻՆ

Արեգակնային համակարգի ութ խոշոր մոլորակները միասին ունեն 278 արբանյակ: Բացի Լուսնից, բոլոր մյուս արբանյակները հայտնաբերվել են միայն աստղադիտակի սրբեղծումից հետո: Ըստ որում առաջինը հայտնաբերվել էին Յուպիտերի չորս խոշոր արբանյակները՝ Իոն, Եվրոպան, Գանիմեդը և Կալիստոն, որոնք կոչվում են նաև գալիլեյան արբանյակներ, քանի որ առաջինը Գալիլեյն է րեւել դրանք:


Հեղաքրքիր է, որ իր չափերով Լուսինը հինգերորդն է արբանյակների թվում: Գալիլեյան արբանյակներից երեքը, բացի Եվրոպայից, ինչպես նաև Սատուրնի արբանյակ Տիտանը չափերով գերազանցում են են Լուսնին: Սակայն բոլոր արբանյակների թվում Լուսինն առանձնանում է մի քանի եզակի բնորոշիչներով: Դրանցից առաջինն այն է, որ բոլոր արբանյակներն իրենց մայր մոլորակներից էսպես փոքր են: Լուսնի տրամագիծը Երկրի տրամագծի մեկ քառորդից մի քիչ ավելի է՝ քսանյոթ տոկոսը, այն դեպքում, երբ Սատուրնի խոշորագույն արբանյակ Տիտանի տրամագիծը կազմում է Սատուրնի տրամագծի մոտ մեկ տասներկուերորդ մասը՝ ութ տոկոսից մի քիչ ավելի: Արեգակնային համակարգի խոշորագույն արբանյակ Գանիմեդի դեպքում այդ հարաբերությունը կազմում է յոթ տոկոսից մի քիչ ավելի:

Զարմանալի է այն, որ Լուսնի և Արեգակի հեռավորություններն իրար հարաբերում են այնպես, ինչպես նրանց տրամագծերը: Արեգակի հեռավորությունը մեզանից 400 անգամ ավելի մեծ է, քան Լուսնի հեռավորությունը, և այդքան անգամ էլ նրա տրամագիծը մեծ է Լուսնի տրամագծից: Այդ իսկ պատճառով նրանք երկնքում երևում են միմյանց չափ: Հենց դրա շնորհիվ է, որ մենք կարող ենք տեսնել Արեգակի տարբեր փուլի՝ լրիվ, օղակաձև և այլ խավարումներ:

Բոլորին լավ հայտնի է, որ Երկրի և Լուսնի ձգողական փոխազդեցության հետևանքով այնպիսի իրավիճակ է սրբեղծվել, որ Լուսինը միշտ մի երեսով է նայում Երկրին: Այդ պատճառով, որքան էլ նայենք Լուսնին, միշտ նույն պարկերն ենք տեսնում: Եթե ավելի ճշգրիտ խոսենք, իրականում մենք տեսնում ենք Լուսնի մակերևույթի ոչ թե հիսուն, այլ հիսունինը տոկոսը: Իրա պատճառն այն է, որ Լուսինը սեփական առանցքի շուրջը պտտվում է շատ հավասարաչափ, իսկ երկրաշրջ ուղեծրով շարժվում է էլիպսով՝ մերձերկրում Երկրին մոտենում է միջինում մինչև 363 000կմ, իսկ հեռերկրում հեռանում է մոտ 406 000կմ: Այն մերձերկրում ավելի արագ է շարժվում, քան հեռերկրում՝ դա փեղեկական մարմինների շարժման օրենքներից մեկն է: Ահա, հենց այդ անհավասարաժամությունը հանգեցնում է նրան, որ մենք իրականում Լուսնի մակերևույթի կեսից ինը տոկոսով ավելի մասն ենք տեսնում:

Սակայն պատմության ընթացքում Լուսնի հակառակ կողմը մարդիկ երբեք չէին տեսել մինչև քսաներորդ դարի կեսերը: Միայն երբ 1959 թ. Խորհրդային Միության «Լոնա 3» փեղեկառանավը կարողացավ հասնել Լուսնին, անցնել նրա

հակառակ կողմը և նկարել այն, մարդիկ առաջին անգամ հնարավորություն ստացան փենսնել այն: Դրանից հետո բազմաթիվ այլ լուսանկարներ են ստացվել, որոնք թույլ են տվել բավականին մանրամասն հետազոտել Լուսնի հակառակ կողմը: Առաջին բանը, որն անմիջապես ուշադրություն է գրավում այն է, որ այնտեղ ծովերը շատ ավելի քիչ են, քան երևացող երեսին:



Լուսինը, ինչպես պարզվում է, աստիճանաբար հեռանում է Երկրից: Հեռանալու արագությունը չափազանց փոքր է՝ տարեկան մոտավորապես 3.82 սմ: Պատկերացնում եք, թե ինչպիսի աներևակայելի ճշտության են հասել չափումները, եթե հաշողվում է չափել 384 400կմ հսկայական հեռավորության ընդամենը 3.82 սմ փոփոխությունը: Դժվար չէ հաշվել և համոզվել, որ հեռացման տարեկան չափը կազմում է Լուսնի ուղեծրի շառավղի ընդամենը մեկ տասը միլիարդերորդական մասը: